

ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՑՈՒԾԱՐՁԱՆ ԺԷ. ԴԱՐԻՑ

Փառաւոր աւանդոյթներ եւ արդիւնքներ արձանագրած հայ բառարանագրութեան ակունքները գալիս են միջնադարեան առաջին բառարաններից, նկատի ունենք յատկապէս Արիստակէս Գրիչի «Վերծանութիւնք»ը, նաև՝ «Բառք ֆերականի», «Հանդէս բանատեղծաց» եւ այլ բառարաններ:

Զեռագիր մատեանների բառարանային նմուշներին զուգահեռ բառարաններ են ստեղծուել նաեւ հայերէն տպագիր գրքերում: Առաջին հայերէն տպագիր բառարանը՝ Ֆրանչիսկոս Ռիվոլայի «Բառգիրք հայոց»ը, լոյս է տեսել գեռեւս 1621ին: Ժէդարում տպագրուած բառարաններից յիշատակելի են նաեւ Կղեմէս Կալանոսի «Քերականական եւ տրամարանական ներածութիւն» աշխատութեանը կից բառարանը (1645), Աստուածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինահայ» (1695), Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»ը (1698): Ցետագայ տասնամեակներին տպագրուած բառարանների պսակը եղաւ 1749ին լոյս տեսած՝ Միհիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկագեան լեզուի» բառարանը¹, որ նոր ու նշանակալի էջ է հայ բառարանագրութեան եւ ընդհանրապէս մեր մշակոյթի համար:

Նշուած բառարանները քաջ յայտնի են հայագիտութեանը²: Սակայն դրանց զուգահեռ հրատարակուել են նաեւ ծաւալով ոչ մեծ բացատրական բառարաններ, որոնք զետեղուած են գրքերի վերջերում, հիմնականում յաջորդում են գրքերի բովանդակութեանը եւ միտուած են տուեալ գրքի բնագրում առկայ՝ հեղի-

1 ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ, Բառգիրք Հայկացան լեզուի, հտ. Ա., 1749. Նոյն, հտ. Բ., 1769:

2 ԳԱՄՊԱՐԵԱՆ, Գ., Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երևան 1968. Ղազարեան, Ռ., էջեր հայ բառարանագրութեան պատմութիւնից, Երևան 2002:

նակի կամ թարգմանչի պատկերացմամբ անհասկանալի, նորակազմ բառերն ընթերցողին հասկանալի դարձնելուն։ Բացատրական նման բառարանները որոշակի պատկերացում են տախի ժէ։ Դարի հայ բառարանադրութեան, շատ դէպքերում՝ լատինաբան հայերէնի, ինչպէս նաև վաղ աշխարհաբարեան հայերէնի վիճակի մասին ընդհանրապէս։

1674ին Հռոմում տպագրուել է Յովհաննէս Պոնայի «Ձեռածուրիւն յերկինս» աշխատութեան հայերէն թարգմանութիւնը։ Լատիններէնից թարգմանութիւնը կատարել է Վարդան Յունանեանը³։

Գիրքն ունի 35 գլուխ, սկսում է «Յաղագս վերջնոյ վախճանին մարդոյ» եւ աւարտում է «Յաղագս կացութեան կատարեցելոցն» գլուխներով, ընդամենը 348 էջ։

Թարգմանութեան հեղինակ Վարդան Յունանեանը կազմել եւ գրքի երկրորդ մասում տպագրել է «Բառարան գրքոյ» անուանումով բառարանը։ Ահա այս բառարանի հայ բառարանադրութեանը բերած նպաստի մասին կը փորձենք խօսել ներկայ հրապարակման մէջ⁴։

* * *

Նախ՝ ո՞վ է Վարդան Յունանեանը։

Վարդանը որդին էր Յունան քահանայի, Թոփամթի Ճռուգիւղից։ Լեհահայերի մէջ ծայր առած խառը ժամանակներում՝ 1682ին կանչուել է էջմիածին եւ հնագանդուել Մայր Աթոռին, սակայն արքեպիսկոպոս՝ ոչ անյայտ Նիկոլի Թորոսովիչի մա-

3 Գրքի ամբողջական տիտղոսաթերթը յետեւեալն է։ Յովհաննէս Պոնա, Ձեռածուրիւն յերկինս։ Պարունակող գգացմանց Արրազամից Հարց, եւ հնագումից իմաստափաց։ Յօրինեցեալ աշխատասիրութեամբ Տեառն ԹՈՂԱՆՆՈՒ ՊՈՆԱԻ. Վահմագունոյ Քարտիսալի, Ա. Ե. Հ. եւ բարգմանեցեալ ի հայկական բարբառ ի Վարդանայ Յունանեան։ Ցամիր մերժարութեամբ Տեառն ՈՂԱՆ. Եւ ըն բուաքերութեամ Արամազմոյ Ռէմի Տպագրեցեալ ի մեծն ՃՌՈՄ ըն տպարանում սրբազնի համագումարին, գհաւատոյք Գիրքը նոյնուրեամբ, սակայն այլ էջակալմամբ վերահրատարակուել 1705 Ամստերդամում։ Մենք օգտուեկ ենք եւ յդրումները կատարել ենք առաջին՝ 1674ի հրատարակութիւնից։

4 Մեզ ծանօթ լեզուարանական աշխատութիւններից Վարդան Յունանեանի սոյն բառանին համառու անդրադարձել է՝ ԳԱՍՊԱՐԵԱՆ, Գ., Հայ բառարանադրութեամ պատմութիւն, Երեւան 1964, 64. Այս բառարանի լատինաբանութիւններին է մանրամասնորեն անդրադառնուու ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, Վ., Լատինաբան հայերէջի պատմութիւն, Երեւան, 2010.

Հուան լուրն առնելուց յետոյ մեկնում է Լվով եւ յանձն է առնում Լեհահայոց արքեպիսկոպոսութեան աթոռը: «Լեհահայոց բոնի միութեան եթէ սկզբնաւորողն նիկոլ էր, զայն լրացնողը Վարդան եղաւ», գրում է նրա մասին Մաղաքիա Օրմանեանը⁵:

Վարդան Յունանեանի եւ մանաւանդ՝ նրա գրական վաստակի մասին գովեստի խօսքեր է ասում Ստեփանոս Ռօքչայ մատենագիրը. «Վարդանս այս ... էր նարտար գրագիր, ուշիմ եւ հմուտ քառիցն Հայոց: Երթեալ յեշմիածին, եւ անտի ընդ նուրիակսն գայ ի Լեհաստան, ուր զրաբեկարգութիւն եւ գուղղափառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն Հայոց. աստի զկնի ուսանելոյն ինչ լատիներէն՝ գնայ ի Հռովմ, եւ ի դպրատանն Ուրպանեան ուսեալ կատարեկալակս զլատին լեզու, քարգմանէ զջեռքածութիւն յերկինս, յամի Տեառն 1671. տպի գեղեցիկ ոճով, բայց իրթին եւ նոր քառիւմ⁶: Զկնի արքեպիսկոպոսին նիկողայոսի՝ ոչ շատ յամեցեալ եւ ինեֆն ի Հռովմ, դառնայ ի Լեռպոլիս. բայց զի նիկողայոս առոյգ էր եւ առողջ, առեալ զիրաման ի Ս. Ժողովոյն՝ երթայ ի Հայատան քարոզելոյ աղագաւ. ուր ընդ ամս իբր տասն տեւէ»:

Յունանեանի ստեղծագործական վաստակի մասին խօսելիս Ստեփանոս Ռօքչան գրում է. «... էր անպարապ ի գրելոյ եւ ի քարգմանելոյ. քարգմանեաց զՔաքէսիզմն եւ զՔահանայապետականն Հռոմէական, Կերակուր քահանայից, Պակասութիւնն Պատարագին, Ծիսարանն (Մաշտոց), Գանձարան աղօթից եւ այլն: Գրեաց զՔաջալերական քութբն առ Եվդոկիացիս, որ է գիրք լի վկայութեամբ Հայոց ժողովոցն, կաքողիկոսաց եւ վարդապետաց մինչեւ յիւր ժամանակն»⁷.

Այս հեղինակի լեզուական-թարգմանական գործունէութեան մի մասն է կազմում նշեալ բառարանը:

Իր նպատակի մասին Վարդան Յունանեանը մանրամասնում է բառարանի ներածականում, ուր գրում է. «Կարեւոր իմն վարկի շարագուգել աստէն համառօտարար զլուծմունս ձայնից ումանց նորակերտից, զմիտք եւ զոհ լարինականի քարքառոյն, պայծառապէս եւ անաղթատ արտասանելոյ սակս հնարեցելոցն. եւ եւս սակաւուց այլոց նախնականաց, որք ի կիր առեցեալք եղեն յինէն ըստ

5 ՕՐՄԱՆԵԱՆ, Մ. արք., Ազգապատում, Բ, 1818:

6 Այս եւ յետագայի ընդգծումները մերն են՝ Ն.Պ.:

7 ՌՕՔՇԱՅ, Ս., Ժամանակագրութիւն կամ տարեկանների կեղեցականի, հրատ. Հ. Ռուկեան, Վիեննա, 1864, 183 եւ 198:

հարազատից նոցին իմացից նայսմ փոքրկանս մատենում» (էջ 1): Նոյն ներածականում հեղինակը գրում է նաեւ, որ իր կարծիքով ընտրել է դժուարհասկանալի բառերը («ըստ որում թեկադրեաց ինձ խելամտութիւն»), իսկ հասկանալի («ընդեկագոյն եւ բացալոյծ») բառերը լրջանցել է: իր բառարանը կազմելիս, հեղինակը նպատակ է ունեցել Պոնայի գրքի հայերէն թարգմանութեան մէջ եղած իր կարծիքով նոր կամ անհասկանալի բառերը բացատրել ընթերցողին բնագրի իմաստը լիարժէք հասու դարձնելու նպատակով:

«Բառարան գրքոյս»ը 52 էջ է ընդգրկում եւ պարունակում է 250 բառայօդուած, սակայն նրա արժէքը միայն ընդգրկուած բառամթերքի քանակով չի պայմանաւորուած: Փորձենք մէկ առ մէկ ներկայացնել, թէ բառարանն ինչ նպաստ է բերում հայերէնագիտութեանը:

ա) Բառարանում հեղինակն ունի մի քանի ստուգաբանական դիտարկումներ, ինչպէս՝ մագնիս բառը բատատրելիս գրում է, թէ ոմանց կարծիքով բառն այդպէս է անուանուել այս քարը գտնողի անունից, իսկ ուրիշներն անունը բխեցնում են Մագնեսիա գաւառից, որտեղ գտնուել է այդ քարը: Կամ՞ քաղցկեղ բառի համար գրում է՝ «Անիսուցաննել զվերս ծախնելով զմիսն, ուստի և յանգարար կոչեցաւ քաղցկեղ, այսինքն՝ Քաղցեալ խոց» (էջ 80):

բ) Որոշ դէպքերում Յունանեանը բառերն օժտել է ձեւաբանական բացատրութիւններով՝ ցոյց տալու համար տուեալ բառի հոլովումը, խոնարհումը եւ այլն, օրինակ՝ միանդր բառի համար նշում է, որ հոլովում է -եր վերջաւորութեամբ, կախեկ՝ -ի, բռնետդ՝ -ետեղ, նաւակիտը՝ -կիտեր այլն:

գ) Շատ դէպքերում բառերը բացատրելիս ներկայացնում է բարբառային, իր տերմինով՝ «ռամկօրեն բառեր»: Դրանց գործածութիւնն ապացոյցն է այն բանի, որ Ժ. դարում աշխարհաբարը դեռեւս վերջնականապէս կազմաւորուած չինելով՝ գրաւոր խօսքում ազատօրէն գործածում էին խօսակցական-բարբառային բառեր, եւ Յունանեանը նոնյապէս իր բացատրութիւններում չի լրջանցել այդպիսի բառերը, այնքան որ դրանք սովորական են եղել իր ժամանակին: Բարբառային բառերի շարքում մի քանի դէպքում հեղինակը բերում է նաեւ օտար-փոխառեալ բառեր: Օրինակ՝ գնդակ բառը բացատրում է այսպէս: «Է անուն գործւոյ ուրումն բոլորակածեւի, որով խաղան մանկունք» եւ այս բացատրութեանը զուգահեռ տալիս է նաեւ դրա ռամկօրէն ձեւերը՝

ֆոլաղուն կամ պտտուկ: Բարբառային այլ բառեր են հետեւեալ-ները. բոնետղ-կոր, կախեկ-կոր, խեցեմորթ-շողոս, եպեղուլաղի, մագնիս-«տանիկի միքառուզ տաշի կոչեն», մէտ-ապրայ, ոստղ-սուինծ, սառնորակ-պլոր, սղղումն-ալվլումն եւ այլն:

Ընդ որում՝ բառայօդուածների մէջ, որպէս կանոն, առաջինը ներկայացնում է բարբառային ձեւը, դրանից անմիջապէս յետոյ՝ բարբառներում գործածուող փոխառեալ տարբերակը, ինչպէս՝ «հազիր - ռամկօրէն բռումն, աննախ»:

Դ) Բառարանի հիմնական առանձնայատկութիւններից մէկը բառակապակցութիւններ սահմանելն է: Հեղինակը, լաւատեղեակ լինելով՝ լատիներէնին ու իր ժամանակի տեսական-աստուածաբանական մտքին, ամէն կերպ փորձում է եղած ու նաեւ իր հնարած բառակապակցութիւնները բանաձեւել, սահմանել, օրինակ՝ «պողոտենուագ - տեսակ իմն բանաստեղծականի վերանառութեան, որ զբաղաքականաց կամ զյատկառից անձանց զվարս եւ զկեանս առցուցանէ: Լատ. *foimē'tihiā*» (էջ 62): Մէկ այլ օրինակ՝ «տեսափոխ - կոչին զանազանութիւնն փոփոխմանց ընտեսարանում, մինչ իրակին ի դերասանից պողոտենուագք կամ բաղենուագք, որք լինին կամ եկեւմտիւք անձանցն իրակողաց եւ կամ փոփոխմամբ նկարից պէսպիսեաց: Լատ. *Uxē'niāj*» (էջ 72):

Ե) Մի քանի խօսք պէտք է ասել բառարանում լատիներէն բառերի տառադարձման եւ ուղղագրութեան մասին: Նախ՝ բոլոր դէպքերում չէ, որ հայերէն համարժէք բառի հետ մէկտեղ հեղինակը տալիս է նաեւ լատիներէն բառը: Իսկ որտեղ որ կան լատիներէն բառեր՝ առանց բացառութեան ներկայացուած են հայերէն տառերով՝ իլէ'նիթիմուս, ինֆէ'լիքս, էքսէու'զօ, քօնսէգուոն եւ այլն: Այստեղ ակնառու են հետեւեալ օրինաչափութիւնները.

- լատիներէն *C* տառի դիմաց բառասկզբում հեղինակը, ըստ արտասանութեան, գործածում է հայերէնի *Փ* կամ *Չ*: *Cālumppia* - Քալումնիա, *Castīgo* - Քասթի'կօ, *Circumspīcīo* - Զիռքումսփի'ցիօ եւ այլն:

- լատիներէն *D* տառի դիմաց գրուած է հայերէն *S*: *Discriptiō* - Տիսքէ'ցիօ, *Discerno* - Տիսչ'ոնօ, այդպէս է եւ բառասկզբում, ե'ւ բառամիջում:

- *G* տառը տառադարձված է հայերէնի *Կ*: *Garrūlītas* - Կառոռ'լիթաս:

- *R̄h* դիմաց *Փ*՝ *Pīrāta* - Փիռա'թայ, *Spīrītūs* - Սփի'րիթուս:

- *Tի գիմաց թ' Turbo - Թո՛ւռապօ, Trāgoedia - Թռաճէ՛տիա եւ այլն:*

Սրանք հիմնական եւ համակարգային օրինաչափութիւններն են, որոնք հիմք են տալիս եղրակացնելու, որ ժէ. դարում լեհահայ գաղթօնախում, ուր գերազանցապէս ապրել եւ գործել է վարդան Յունանեանը, գործածուող հայերէնն իրենից ներկայացնում էր «երկշարք ձայնեղագուրկ» բաղաձայնական համակարգ ունեցող խօսակցական մի տարրերակ, որում ձայնեղ բաղաձայնները վերածուել էին խուլերի (*ρ>պ, գ>կ, դ>տ*)⁸: Թէեւ պէտք է ասել, որ նշուած կանոնները գործում են միայն փոխառեալ լատիներէն բառերի գրութեան մէջ, իսկ բառարանի, ինչպէս նաեւ Պոնայի «Ձեռքածութեան» շարադրանքում հնչիւնական նման շեղումներ չեն հանդիպում, թարգմանութիւնը կահարուած է կանոնանաւոր գրաբարով թէ՛ հնչիւնական, թէ՛ քերականութեան առումներով:

* * *

Բառարանը նախ եւ առաջ լատինաբան հայերէնի մի նմոյշ է, ինչպէս որ ամբողջութեամբ լատինաբան չնչով է գրուած «Ձեռքածութիւն»ը: Այստեղ հանդիպում ենք ե՛ւ ներգոյականի ընկամ և մասնիկով կազմութեան, ե՛ւ շարադրասական նորամուծութիւնների, ե՛ւ նորահնար բազմաթիւ բառերի, որոնք լատինաբան հայերէնի աչքի զարնող օրինաչափութիւններից են: Կարծում ենք բնագրից բերուած մէկ-երկու մէջբերումները դրա լաւագոյն վկայութիւնը կարող են լինել.

«Ձերկիրս այս, զոր փեացելով նեմմամբ այժմ ներբակոյնես, յապա ինքն ներբակոյնսցէ զինզ. եւ ո՛չ եւս յաւելցիս ստանալ յանմանէ, զոր վերլուծեցելովք անդամօֆ քովք եւ նեխնեցելօֆ օդուածովք զետեղիցես: Ի սմին եւ նայսմ ոչընչում շինեա՛ քեզ զմեծամեծս եւ զանմահականս» (Էջ 125):

«Ամենամեծ նշան բաղադրեցելոյ մտին, եւ ի թիւրից ըղաձակտութեանց մաքրեցելոյն, ե՛ կարելն կալ ընդ ինքնան: Որպէս Աստուած, ինքնամբ միայնով երանեցեալ, նինքնան ցանգ յարամնայ» (Էջ 248):

8 ԴԱՐԻԲԵԱՆ, Ա., Հայ բարբառագիտութիւն, Երեւան 1953, 60-62.

Լատիներէնից կատարուած այս թարգմանութեան մէջ, բնականաբար, մեծ թուով բառեր թարգմանուել ու պատճէնուել են հէնց լատիներէնից, որոնց մի մասը ներառուած են բառարանի մէջ:

Ստորեւ ներկայացնուող աղիւսակը կարող է ցոյց տալ, թէ Վարդան Յունանեանն իր բառարանում ինչ կերպ է վարուել լատիներէն բառերը հասկանալի դարձնելիս: Այստեղ չորս սիւնակներում համարդիկ ենք, նախ՝ լատիներէն բառը, ապա այդ բառի՝ արդի հայերէնում ունեցած իմաստը կամ համարժէք բառը, ապա՝ նոյն բառի տառադարձուած տարբերակը ըստ Յունանեանի բառարանի, ապա՝ Յունանեանի հնարած համարժէք բառը: Համեմատութեան համար ընտրել ենք լատիներէն-հայերէն՝ մեր օրերում կազմված բառարանը⁹: Նման կերպ հնարաւոր կը լինի ցոյց տալ, թէ Յունանեանի կերտած բառերը յետագայում կիրառութիւն ստացե՞լ են արդեօք, թէ¹⁰ մնացել են իր ժամանակի սահմանփակ գործածութեան մէջ, եւ թէ ինչպիսի կապ կայ ժիշտարում լատինաբան հայերէնի ընդերքում ստեղծուած բառերի եւ դրանց յետագայ ճակատգրի միջեւ:

Լատիներէն բառ	Արդի հայերէն համարժէքը կամ բացատրութիւնը	Լատիներէն բառը՝ ըստ Յունանեանի տառադարձուի	Յունանեանի կազմած նոր բառը
Cālumnia	զլարարութիւն, խարդավանք	Քալումնիա	բարուր ¹⁰
Castīgo	պարսանել, կշռամքել, սահմահարել	Քաստիկօ	խրամատապատճեմ
Circumspīcio	շուրջը ննյել, զննել	Չիրքուամփին'ցիօ	ակնաշրջածեմ
Constituo	դնել, տեղադրել, սահմանել	Քօնստիք'քուօ	տրամակայեմ
Conversācio	յանախակի օգտագործում, վարվեցողութիւն	Քօնվեռսացիօ	երթեկցուքիւն
Discerno	բաժնել, տարբերել	Տիսչէ'ննօ	տրամատեսեմ
Descriptio	բաժանում, բաշխում	Տիսքոլ'ցիօ	ենթատրոհումն
Diū	երեալ (ժամանակ)	Տիու	յարակ
Diūturnītas	տևողութիւն, երկարաւութիւն	Տիուքո'ւռմիքաս	յարակումութիւն
Emendo	ուղղել, կարգանքել	Էմմէ'ննօ	դերյարդարեմ
Excūso	արդարացմեն, որպէս արդարացում ներկայացմեն	Էքսմո'ւզօ	առքարեմ

9 ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, Ա., Լատիներէն-հայերէն բացատրակամ բառարան, Երևան 2005.

10 «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի»-ում բարուր-ը բացատրուած է՝ «սնուտի կամ սուս պատճառք, չքննդութիւն»:

<i>Exhērēdo</i>	Ժառանգութիւնից զրկել	Էխէրէու՛տօ	Ժառանգատեմ
<i>Fidūcia</i>	համոզուածութիւն, գրաւադրում	Ֆիտո՞ւցիայ	յուսացողութիւն
<i>Garrūlitas</i>	շատախօսել, երգել (բռչութերի)	Կառու՞ւկիքաս	կարկաչոտութիւն
<i>Histrio</i>	դերասան	Հիսթո՞իօ	դերասան
<i>Inſelīcis</i>	դժբախտ ինչ-որ քանում, ոչ երանիկ	Ինֆէ՛լիքս	ապերաջան
<i>Larva</i>	ուրուական, չար ոգի	Լարույ	դիմայլակ
<i>Magnōphēre</i>	համառօրէն, ստիպողարար	Մակնօ՛վիքը	մեծիրապէս
<i>Mālē</i>	վատ	Մա՞լէ	չարուք
<i>Mēta</i>	կոմ(աճն) մարմին, նշան, նպատակ	Մէ՛ր-ա	միանդր, եր
<i>Occūpo</i>	զբաղեցնել, զաւընել	Օ՛քքովիօ	զետեղեմ
<i>Pirāta</i>	ծովահեն	Փիուա՞րայ	նաւարտակ
<i>Prōficio</i>	առաջ շարժուել	Փոօֆի՞չօ	զարգանամ
<i>Promptus</i>	ակնառու, պատրաստի, յարմար	Փոո՞միքուս	յարմարափոյք
<i>Prōpōſitum</i>	հասանելի, բաց	Փոօփօ՞սիքում	առաջադրեալ
<i>Prōtinūs</i>	այսուհետև, յետոյ, անդադար	Փոօ՞քինուս	փոյքընդոստ
<i>Prōventūs</i>	երևալը, բերքահաւաք, զարգացում	Փոօւէ՞նքուս	հաշուեմուտ
<i>Rārus</i>	հազուադէպ	Ռա՞ռուս	տրամախիտ
<i>Rātio</i>	հաշիվ, ցուցակ, գումար..., նաև՝ բանականութիւն, դատողութիւն	Ռա՞ցիօ	բանավարութիւն
<i>Rēcuso</i>	հրաժարուել, դեմ լինել՝ բռորմնել	Ռէքո՞ւսօ	ընդրասրեմ
<i>Rēſilio</i>	յես թոշել	Ռէկի՞լիօ	ընդոստեմ
<i>Sātisfactio</i>	բաւարարուածութիւն	Սաքիսֆա՞քիօ	բաւականարութիւն
<i>Scēna</i>	թիվ	Սէկ՞նայ	տեսափոյն
<i>Simūlācrum</i>	տիպար, նմանակ, ուրուական	Սիմուլա՞քում	նմանակերտ
<i>Spectācūlum</i>	տեսարան, բնմականացում	Սփէքտրա՞քուլում	հայեցարան
<i>Spīritūs</i>	շմէլը, օդ, հոգի, կենամք	Սփի՞րիքուս	կենակիր
<i>Stōmāchus</i>	ստամքն	Սրօ՞մաքուս	եկարան
<i>Summa</i>	բարձր պաշտօն	Սու՞մմա	գումարտակ
<i>Sūperclīum</i>	յօնի՞ք	Սուվէռչիխում	արտևում
<i>Titūlus</i>	մակագրութիւն, տիտղոս	Թի՞քուլուս	պատուագրութիւն
<i>Trāgoedia</i>	ողբերգութիւն	Թոաթէ՛տիա	Քաղենուագ
<i>Trōchus</i>	երկարեայ օդ	Թոօ՞քուս	գնդակ
<i>Turbo</i>	արագ պտոյտ, հոլ	Թու՛փիօ	գնդակ

Բերուած բառացանկից երեւում է, որ Վ. Յունանեանի գործածած բառերից այսօր էլ նույն կերպ ու նոյն իմաստով

գործածում են մի շարք բառեր, ինչպէս՝ արժանապատիւ, բացագանձեմ, գումարտակ, դերասան, զետեղեմ, թոյլատրութիւն, ուսումնական, սառնորակ, սկզբնախաղ, սպրդեմ, սուտակասպաս, ցուցամոլութիւն, փաստաբան, փորձառութիւն, բաղամակարութիւն եւ այլն, որոնցից մի մասի ակունքը լատինաբան հայերէնն է:

Մի շարք դէպքերում լատիներէն բառի դիմաց Վ. Յունանեանը նոր բառ է հնարել, չնայած որ հայերէնում գոյութիւն ունէին դրանց համարժէքները, ինչպէս՝ Supercilium բառը թարգմանուած է արտեւուն այն դէպքում, երբ հայերէնում գործածական էր յօնք բառը, նմանապէս հեղինակը հնարել է մեռինայ՝ թոյն բառի փոխարէն, նաւարտակ - ծովահենի փոխարէն, չարտք - վատի փոխարէն, պատուագրութիւն - մակագրութեան փոխարէն եւ այլն:

* * *

Վարդան Յունանեանի բառարանի ամենաուշարգաւ պահը, մեր կարծիքով, նոր բառերի առատութիւնն է:

Նորակազմ բառերի յայտնաբերումը չդադարող ընթացք է հայերէնագիտութեան համար: Եթէ մեր օրեղում անգամ գրաբարեան շրջանի համար շարունակ ի յայտ են գալիս նոր բառերի նորանոր խմբեր, որոնց հիման վրա անգամ ամբողջական բառարաններ են ստեղծուած¹¹, ապա որքան առաւել նոր բառեր պէտք է արձանագրուեն լատինաբան հայերէնի կամ մեր լեզուի վաղ աշխարհաբարեան շրջանի համար, հաշուկ առնելով, որ Ժ.-Ժ.-Ժ. դարերում ստեղծուած երկերն իրենց թուաքանակով գուցէ չեն զիջում նախորդող դարերին, եւ յետոյ՝ այդ երկերից շատ-շատերը լեզուական կողմով լիարժէք ուսումնասիրուած եւ գիտական շրջանառութեան մէջ դրուած չեն:

Խօսքն այս դէպքում այն բառերի մասին է, որոնք որեւէ այլ աղբիւրում չեն հանդիպում, նաեւ գրանցուած չեն հայերէնի բառարաններում (առաջին հերթին նկատի ունենք ՆՀԲ՝ «Նոր Հայկագեան բառարանը» եւ ԱԲ՝ «Առանց բառարան Հայկագեան

11 Նկատի ունենք յատկապէս հետեւեալ աշխատութիւնները՝ ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ.- Ա.Ի. ՏԻՍԵԱՆ, Հ., նորայայտ բառեր գրաբարում, Երեւան 2007. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., Գրաբարի բառարան (նոր հայկագեան բառարամում չվկայուած բառեր), Երեւան 2010.

լեզուի»)¹²: Նման բառն ընդունուած է համարել նորակազմ կամ նորայայտ¹³: Առհասարակ լատինաբան հեղինակների երկերը եւ մանաւանդ բառարաններն աչքի են ընկնում նորակազմ բառերի առատութեամբ: Համոզուելու համար բերենք երկու օրինակ ժեպարի բառարաններից: Կղեմէս կալանոսի «Քերական եւ տրամարանական ներածութիւն» գրքի վերջում զետեղուած է «Բառգիրք ամենայն իմաստասիրական բառից հայոց եւ լատինացւոց» թարգմանական գիտական բառարանը¹⁴: Դրա Ա. տառի տակ բերուած մօտ 300 բառերից 14ը բացակայում են գրաբարի բառարաններից, այսինքն՝ դրանք պէտք է համարել նորակազմ, ինչպէս՝ այսութիւն, անարտագրելի, անաւարտելի, անդրաշրջիլ, անդրաշրջումն, անրմբոնելութիւն, (ԱԲՆ ունի անըմբոնողութիւն), անյատուկ, անյատկապէս, անողջախոհութիւն, առրայ (ԱԲ՝ առբայութիւն), առրայական, առրայապէս, արեգակնակացումն, արտաքսապէս: Այս շարքում չենք հաշուել ուղղագրական տարբերակները՝ անանձատելի, առմատ եւ այլն:

Մէկ ուրիշ՝ Աստուածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինահայ» բառարանում¹⁵, որն ունի 596 էջ, միայն առաջին տասը էջերին հանդիպում են հետեւեալ նորակազմ բառերը. անարգասնեալ, հնասկզբականք, վիժարար, առերգեցեալ, կարկեհանատեսիլ, յարմարագարդ, յարմարակիլր, բացխավաճառ, բթվշաղ եւ այլն:

Նոր բառերով խիստ հարուստ է նաեւ Յունանեանի բառարանը:

Նախ պէտք է ասել, որ հեղինակն իր թարգմանութեան բնագրում եղած ոչ բոլոր նոր բառերն է մուծել իր բառարանի մէջ, օրինակ՝ «Ձեռքծութեան» շարադրանքում առկայ արտադասնեմ, արտացուցանիմ, ենթադատութիւն, համբաւածաւալ, հոգունակարար եւ շատ այլ բառեր չենք գտնի գլխաբառերի թւում:

12 Գրաբարի բառարաններից Ակատի եմք ունեցել՝ «Առանձն բառարան հայկագեան լեզուի», Անդրիլիս 1988: «Նոր բառգիրք հայկագեան լեզուի», Խո. Ա.Բ, Երևան 1979-81: Ղագարեան, Ռ., Գրաբարի բառարան, Երևան 2000.

13 Նորակազմ բառերը բնութագրելու համար յանախ գործածում են նորակերտ, նորայայտ, նորագիւտ, նորաբնոյթ, նորահնար, նորամուտ եզրերը:

14 ԿՂԾՄԷՍ ԳԱԱԱՆՈՒ, Քերական եւ տրամարամական ներածութիւն առ յիմաստափրութեան շահելոյ, Հռոմ 1645.

15 ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻՐ ՆԵՐՍԵՍՈՎԿԻԶ, Բառագիրք Լատինացւոց եւ Հայոց ի վերայ Աստուածաշունչ եւ Ժամակարգութեան գրոց Հայոց եկեղեցւոյն, Հռոմ 1695:

Անտեսուած են նաեւ բառայօդուածներում՝ բառերը բացատրելիս գործածուած մի շարք նոր բառեր, օրինակ՝ անկարելոչ բառի բացատրութեան ժամանակ գործածում է լարաբաժանեցալ նոր բառը, սակայն այն բառարանի բառաշարքերում չկայ, արտեւուն բառը բացատրելիս ունի կարճաբոյս բառը, նմանապէս՝ յոգնամենութիւն, մեծահաջուեցութիւն, խոթնածութիւն, շարժառոցել եւ շրջածութիւն եւ այլն, սակայն դրանք ընդգրկված չեն բառացանկի մեջ։ Բայց օրինակ յուսացողութիւն բառը բացատրելիս գործածում է իսկադիր, որը կայ նաեւ բառացանկում, բաւականարութիւն բառը բացատրելիս գործածում է առքարել, որն ընդգրկել է իր բառաշարքում։

Այդպէս ստացւում է, որ Բառարանը կազմուել է թարգմանչի հայեցողական ընտրութեամբ, եւ դա, անշուշտ, որոշակիորէն նուազեցնում է Բառարանի գիտական արժէքը։ Թերեւս պատճառն այն է, որ բառարանից դուրս թողնուած նոր բառերը հեղինակի համար, կամ գուցէ իր ժամանակի լատինաբան հեղինակների համար սովորական են եղել, որի մասին վերեւում խօսեցինք, ուստի առանձին բացատրելու հարկ չի ունեցել։

Հեղինակը մի քանի բառեր յատկապէս մանրամասն է նկարագրում, ինչպէս՝ ախտաշեր, անկարելոչ, ապառոցեմ, բաւականարութիւն, թիկնատանդեմ, միանդր եւ այլ բառերի դէպըում։ Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մանրամասն մեկնաբանել է իր ստեղծած բառերը, իսկ նրանք, որոնք որ հանրածանօթ են եղել իր ժամանակ, հիմնականում բաւարարուել է հակիրճ բացատրութեամբ։

Ցունանեանի բառարանի մի շարք բառեր չունեն ՆՀԲ եւ ԱԲ, բայց ընդգրկուած են Ստեփանոս Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանում»։ Արդեօ՞ք դա նշանակում է, որ վերջինս օգտուել է Վարդան Ցունանեանի բառարանից եւ որոշակի բառեր քաղել։ Դժուար է այդ հարցին պատասխանել, քանի որ մեր քննած բառարանի որոշ բառեր Մալխասեանցի բառարանում ընդգրկուած են (սմարակտոս, տրամախիտ, փոյթընդոստ), բայց որոշ բառեր էլ նրանում չկան (կարծրախօսութիւն, տրամապահով, տեսափոխ եւ այլն)։ Շատ աւելի հաւանական է թուում, որ նշեալ բառարանն ի՞նքն է օգտուել մէկ այլ բառարանից, որը քաղուածաբար մէջբերումներ ունի Ցունանեանի բառարանից։

Հաշուի առնելով, որ հայոց լեզուի պատմութեան, հայերէնի բառապաշարի զարգացման եւ լատինաբան հայերէնի պարզա-

բանման համար որոշակի արժէք կարող են ունենալ Վարդան Յունանեանի բառարանի նորակազմ բառերը՝ ստորեւ ներկայացնում ենք այդ ցանկը հէնց իր՝ Վարդան Յունանեանի բացատրութիւններով (որոշ դէպքերում՝ համառօտուած տարբերակով): Պահպանել ենք հեղինակի կիրառած ուղղագրութիւնը (ցաքեմ, լաբին) ու նաև նրա բերած լատիներէն տառադարձումները, եթէ այդպիսիք բերում է հեղինակը: Մեր միջամտութիւնն առկայ է միայն կէտադրութեան մէջ. այն համապատասխանեցրել ենք ներկայումս ընդունուած կանոններին:

Ա.ԽՏԱ.ԶԵՐ, -երան, յոգնակի՝ ախտացերունք. սեռական իմն անուն դժմարակի հիւանդութեան, զոր լաբինացիք ֆէ՛պոիս յարանուանեն, եւ է՛ անբարեխառն ինչ տապ:

Ա.ԿՆԱ.ՇՐՋԱ.ԾԵՄ, հոգունակարար շուրջ ածելով զաչս, այսր եւ անդր հայիմ մտադրութեամբ: Լատ. չիռքումափի՛ցիօ:

Ա.ՂՄԿԱ.ՓԱ.ԹՈՅԹ, շրջապատեցեալ աղմկիւք, թէ հոգեկանօֆ եւ թէ մարմնականօֆ, եւ զառածեցեալ նոքօֆ:

Ա.ՑՄՐԱ.ՔԱ.ՐՃԵՄ, բոնութեամբ յետս քարշեմ:

Ա.ՑՄՐՈՍԵՄ, յե՞ս ցաքեմ:

Ա.ՆԴՐԱ.ՔԱ.ՑԵՄ, յետս աքացեմ, հանգոյն գրաստից եւ նախրաց:

Ա.ՆԺՈՒՐ, նուազ եւ անզօր, կամ ո՛չ պարարտ:

Ա.ՆԿԱՐԵԼՈԶ, շոյ, յոգ. անկարելչունք, շաց. տեղի ինչ, շրջափակեցեալ պատուարաւ եւ լարաբաժանեցեալ ի ներքս յորձապատիւնանապարհօֆ եւ համանմանիւք: Ի յունաց եւ լաբինացւոց լապիրի՛նքուս վերաձայնի:

Ա.ՆԿՈԽԱ.Տ, որ ո՛չ ստորադրէ զինքն այլում կամ խոնարհեցուցանէ, եւ կամ՝ որ ո՛չ տայ կոխատիլ ինքնեան:

Ա.ՇԽԱ.ՏԱ.ՅՈՅԹ, լի աշխատութեամբ եւ դժուարութեամբ:

Ա.ՊԱ.ԶՆԻ, որ ոչ է սերեցեալ յազնուականէ տոհմէ, կամ ուամիկ. նոյնակս եւ արարք անպատեհ կոչին ապազնիք:

Ա.ՊԱ.ՌՈՅԵՄ, ի բաց բողում եւ հրաժարիմ յիրէ յայնմանէ, զոր ունեցեալն էի նախկնարար, զորօրինակ՝ հրաժարիլ յեպիսկոպոնութենէ կամ ի վերակացութենէ, յիշխանութենէ, զոր յառաջագոյն ունէի: Լատ. ունին' ցիօ:

Ա.ՌՈՒԻՆԻՄ, հասանեմ ցանկացելոյ իրին, զոր կամէի, արդ ընկալեմ զնոյն: Լատ. քօնսէգուոն:

ԱՐՏՍԱՏՆԻ, որ ի գործ արկանի արտաքս քան զոռւթեն, եւ կամ իր ինչ, որ ո՞չ է տնային:

ԱՐՏԵՒՐՈՒՆ, -աճ. յոգ. արտեւանունք, -անաց կամ -ունց. վերջնագոյն մասն ճակատոյն;՝ որ մակաչաց վերակայի, ծածկեցեալ հերօֆ կարբարուսիւք, զոր ուամկօրէն ունք վերածայնեն:

Ա.ՔԱՌՆԱՇՈՅՑ, կարի վաղվաղուն եւ երագ, ի փոխել աժեացն, յորում ցուցանի երբեմն ինքնահաւանութիւն իմն, անխռհեմութիւն եւ կամ անհամեստութիւն: Լատ. փուշփո՞փեռուս:

ԲԱՂՋԱՔԱՐՇՈՒԹԻՒՆ, քարշումն ի բաղձանս եւ ի կարօտանս, կամ քարշիցումն ի բաղձանաց:

ԲԱԻՍԿԱՆՆԱՐՈՒԹԻՒՆ, անպարտ առնել զինքն, առբասրումն, վեարումն, բաւականապէս վնարումն պարտաւորութեան, զի բաւական արութիւն է այնքա՞ն առնել, որքան բաւական լինի բարկացելոյն: Լատ. սարիսֆա՞ցիօ:

ԲՈՒՆԵՏՂ, -ետեղ. ուամկօրէն՝ կոք:

ԳՈՒՄԱՐԵՏՂ, տեղի գումարման մարդկանց կամ այլոց իրաց:

ԴԱՐԱԿԵՄ, ճանաչեմ այնքան նրագունիւ խուզմամբ եւ հետազօտմամբ, մինչ մնայ եւ ո՞չ ինչ յենթակայումն ճանաչելոց, գաղեցեալ յիմյս ճանաչման:

ԴԵՐՅԱՐԴԱՐԵՄ, զբիւրեցեալն եւ զխանգարեցեալն վերստին ուղղեմ եւ յարդարեմ: Լատ. էմէ՛նտօ:

ԴԻՄԱԾՄՐՈՍԵՄ, ընդդէմ զինիմ եւ հակառակ կամ, զի մի՛ լիցի, եւ իր բարձրավգօրէն կիրճ արկանեմ եւ խանգարեմ զինելութիւն իրին: Լատ. նմֆէ՛տիօ:

ԵՆԹԱՏՐՈՀՈՒՄՆ, կոչի առաքինութիւնն այն, որ ներփակէ յինքնան զվեխու եւ զիսկական վերլուծումն զիրացն հետագայից, նրագունիւ հետազօտմամբ: Լատ. տիսքո՞ցիօ:

ԵՐԲԵՄՆՈՒԹԻՒՆ, անուն բաղկացեալ ի մակրայէն երբեմն, եւ նշանակէ զկիրառումն ժամանակի նովիմբ մակրայիւ:

ԵՐԲԵՒ, մակրայ ժամանակական, մերք, յայլում ժամանակի կամ յորում եւ իցէ ժամանակի: Նշանակի եւս ուրեմ ուրեմ:

ԵՐԹԵԿՑՈՒԹԻՒՆ, կցորդութիւն գնալոյ եւ գալոյ առ միմեանս, սովորութիւն ժաղաքավարիոյ ի միասին: Լատ. Քօնվեռասցիօ:

ԸՆԴԲԱՄՐԵՄ, ի բաց մերժեմ եւ հեռացուցանեմ յինէն, բացասեմ հրաժարմամբ: Լատ. ոկու՞սօ:

ԸՆԴՀՈՄ, յաճախագոյն եւ երկարածիգ, երբեմն նշանակէ խիտ առ իրու:

ԹԻԿՆԱՍՍԱՆԴԵՄ, ստեմ եւ փոխեմ զասացեալս իմ, ոչ կամիմ գալ առ իրն առաջադրեցեալ եւ պառտճառեմ զրանս պէսպէս:

Լատ. Թէոնիվէ՛ոսո:

ԻՍԿԱՍ. գուրկ ի նշմարտութենե՛տ, սուտ:

ԼՐԱՐԿՈՒԹԻՒՆ, չարախօսութիւն կամ վատարանութիւն գումեմնե՛տ:

ԽՎՂԵՏՂ, երապարակ եւ տեղի խաղուց:

ԽԵԼԱՑՆՈՐԱԺԷՏ, ախտացեալ հիւանդութեամբ խելացնորիւ: **Լատ.** Փուե՛թիֆուու:

ԽՐԱՄԱՏԱԶԳԱԾ, գգածեցեալ վնասարերիւ եւ աւերածեաւ խորհրդավ կամ դիտաւորութեամբ կամ մտածութեամբ կամ իրակութեամբ կամ բանիւ եւ այլով համայնիւք:

ԽՐԱՄԱՊԱՏՔԵՄ, կշտամբեմ բանիւք կամ պատժեմ քինախնդրութեամբ եւ խրատու: **Լատ.** Էասթի՛կօ:

ԽՐՈԽՏԱՌՈՑԵՄ, շարժեմ զգլուխս հանդէկ կրծոյս՝ ահացուցանելով զոք եւ կամ սպառնամ միանգամայն զրանս խրոխտս եւ զոգորախս ելուզանելով:

ԽՏՏԱՑԱՆ, հիւանդութիւն իմն աչաց, որ շառագունէ զսպիտակոյց նորին եւ ուռուցեալ զկոպսն, յետս շրջէ իրը զարիւնատեսիլ եւ զկեղունակս: **Լատ.** Օֆրալմիայ:

ԾՐԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ոճ իմն խօսելոյ, որ համանմանիւք եւ երկիմացիւք բանիւք զբողէ զիմացն ուղղական եւ իրը ներածրարէ զի՞սկն իրին:

ԿԱԽԵԿ, -ի. բարկագոյն եւ խիստ մասնիկն այն ամենից պտղոյ, յորմէ կախին յոստոյ ծառոյն, զոր ոամկօրէն կոր անուանեն:

ԿԱՐԾՐԱՆՈՍՈՒԹԻՒՆ, անհաւաստութիւն եւ տարակուսական իմն գօրութիւն բանից, որ ի կարծիս եւ ի տարակոյս արկանէ զլսողսն:

ԿԱՐԿԱԶՈՏՈՒԹԻՒՆ, լեզուագարութիւն ախմարական, որ ո՛չ զվայլս ունի խօսելոյ եւ ոչ իսկ զժամանակ եւ զորպիսութիւն խօսիցն ընտրէ:

ԿԵՆՍԱԿԻՐ, նախապետական իմն գօրութիւն հոգւոյն, որ յաջողակօրէն յարդարէ զրնաւս նորին ներգործութիւնս, եւ իրը յինքեան կրէ զկեանս: **Լատ.** Ափի՛րիթուս:

ԿԵՐԱԿԻՐ, որ առքերէ զիսրտիկս ի սեղան: Առ իշխանս է' արժանապատիւ իմն կերակրութիւն, զոր լաբինացիք տափիֆէռ վերակոչեն:

ԿԵՐԱՐԿ, ամենայն ինչ, որ տրի վասն ուտելոյ եւ ըմպելոյ, որպէս եւ ոռնիկ անուանի ամենայն ինչ, որ առ ի ուտել ի զգենուլ եւ յայլ պէտս առատրին:

ՀԱՅԵՅՅԱՐԱՆ, տեղի, ուր խաղք եւ պէսպէս հրճուանի հասարակականի հրապարակին: Մերք ասի եւ ինքեան հայեցմանն առ յայսպիսիս: Լատ. սփէքքաբուլում:

ՀԱՇՈՒԽԵՄՈՒՏ, պտուղ եւ շահ տարեկան, զոր ժողովեմիք ի ստացուածոց մերոց, յանդեայց, յանդաստանաց, ի տանց, ի քաղաքաց: Լատ. փուուէնթուս:

ՀԱՍՍԿԱԼԵՄ, հասանեմ իրին ցանկացելոյ եւ իւրացուցանեմ զնա:

ՀԱՍՏԱԴՈՔ, որ ունի զատուար իմն եւ զամրագոյն արմ, եւ կամ որոյ կողմն ներքին հաստագոյն է, քան զկողմն վերին:

ՀԱՐԿԱՄԻՏԻՄ, ստիպիմ իբր ի հարկէ առ ի հետեւիլ առաջադրեցելոյ իրին:

ԶԵՐԱՄԾՈՒԹԻՒՆ եւ ձեռնածութիւն, ըմբռնումն ի ձեռանէ եւ առաջնորդումն: Լատ. մանուսոութցիօ:

ՃԵՊԱՄԵՐԹ, յաճախապէս, բազմիցս: Լատ. փուգուէնթէր:

ՄԵԾԻՒՐԱՊԷՍ, կարի, յոյժ, սաստիկ: Լատ. մակնօ'փէրէ:

ՄԵՌԻՆԱՅ, խոտ ինչ բունալի, որ բուսանի ի լերինս անջրդի: Լատ. աֆօ'նիթում:

ՄԻԱՆԴՐ, -եր, կոչի ձողանեւ նիշն, զոր կառուցանեն նասպարիսում, վասն խաղուց ընթացականաց: Լատ. մէ'թա:

ՑԱՐԱԿ, մակրայ ժամանակական. ընդ երկարաձիգ իմն ժամանակ: Լատ. տի'ու:

ՑԱՐԱԿՈՒՆՈՒԹԻՒՆ, երկարաձգութիւն ամանակի. թիւ աւուրց եւ յոգնամնենութիւն տեւելոյ: Լատ. տիութու'ոնիթաս:

ՑԱՐՄԱՐԱՓՈՅԹ, որ արդ պատրաստեալ է առ ի զիր ինչ առնել թարց յապաղման կամ ծուլութեան, եւ որ առնեն պատրաստոյ, մինչ խնդրի կամ պիտոյանայ: Լատ. փոօ'մփրուս:

ՑԱՄԻՆ, -այշ, -եաւ. յապաղումն, պատճառեցեալ ի կամաց յամողին:

ՅԱՊԱՌԵՄԸ, եպիքեմ, անհոգանամ եւ իբր յապառնում ամանակի քողում զջան եւ զիոգացութիւն իրին առաջադրեցելոյ, երբեմն է՝ անգոստեմ, առ յոշինչ համարիմ: Լատ. ԱՇՎԱԿԻԿՕ:

ՅԱԻԵՏԱԳԻՆ, որ զառաւել ունի զգին, եւ զմեծահաշուեցութիւն, քան զայլ:

ՅՈՐՁԱՊՏՈՅՑԸ, նշանակէ զշրջարեմունս եւ զիսոքնածութիւնս քանից, եւ եւս զնանապարհ եւ զշափիղս մանեմանս, եւ յատկապես առնանի վասն ջրոյ:

ՅՈՒՍՍՅՈՂՈՒԹԻՒՆ, կարծիք իմն իսկադիր եւ յոյս, ըղացեալ¹⁶ զինքենէ կամ զայլմէ, ի կիր արկանի մերք ի կողմն չար, եւ մերք՝ ի բարի: Լատ. Փիտո՛ւցիա:

ՆԱԻԱԿԻՏՐ, -կտեր, տեսակ իմն փոքեր ձկան, զորմէ նառեն արգելուկ զնաւն ի գնացից յենմամբ եւեր իւրով ի նա: Իսկ այլք ասեն յամբագոյն արտագործել զընթացս նաւին, այլ ո՛չ հատանել ամենեւին զբափ գնացից նորին: Լատ. ուկոնա: Յունարէն էի՛նէիս յարանուանի:

ՆԵՐՍՈՒՆԱՊԵՍ, կարի իմն ներքսապէս եւ իբր յեցեալ ի սրտում, թէ սիրով, թէ խորիրդով եւ թէ այլովք իրօֆ: Լատ. ինքիմէ:

ՆՇԱՆԱՌ, ցուցակ իմն եւ նշան արհամարհանաց, որ լինի ի շարժառոցելոց ձեռին, շրջածութեամբ աշաց կամ առոցմամբ այլոց անդամոց:

ՆՄԱՆԱԿԵՐԸ, պատկեր ինչ կազմեցեալ ըստ նմանութեան իրի ուրուի: Լատ. սիմուլա՛՛քում:

ՇԱՐԺԱԿՑԵՄԸ, շարժմամբ անդամոց մարմնոյս հեշտացուցանես զիայցօռս: Լատ. նէսքի՛՛քուո:

ՇԱՐԺԱՌՈՅԵՄԸ, յօրացմամբ իմրւ շարժեմ զանոս կամ զանձս իմ այսր եւ անդր:

ՇԻՒՂԱԴՔԶ, կուտակ ինչ շիւղից կամ այլոց նիւթոց, զորս դիզարդել սովորեն մրջիւնք ի վերայ բունոց իւրեանց, մանաւանդ յանտառս եւ ի վայրս խոնաւուտս:

ՇԼԱՆԿԱՏԵՄԸ, հայիմ սակաւ ինչ ունելով գտեսութիւն եւ իբր զկիսակոյր: Լատ. չէքո՛ւցիօ:

ՇՆՈՐՀԱՌՈՒԹԻՒՆ, պարգեւումն կամ ընձեռումն շնորիի ուրուի ըստ արդեանց եւ արժանաւորութեան: Լատ. պէնէֆի՛՛չում:

16 Գրքում տպագրուած է «ըղացեալ», պէտք է ուղղել «ցղացեալ».

ՈՒՂՂԱԿՈՒԵՄ, հարթեմ եւ ուղղեմ զբիւրութիւն կամ առ ուղին դարձուցանեմ զարտելեալն:

ՊՈՂՈՏԵՆՈՒԱԳ, տեսակ իմն բանաստեղծականի վերաճառութեան, որ զբաղաքականաց կամ զյատկառից անձանց զվարս եւ զկեանս առցուցանէ: Լատ. Խօմէ՛տիա:

ՍԱՐՈՒՐԱԿԵԱՅ, յօրիմեցեալ ի սառնորակէ: Լատ. Ֆրիսթա՛լինում:

ՍԻՐԵԼԱԶՐԿՈՒԹԻՒՆ, զրկին յայնց իրաց, որք կարի իմն սիրելիք իցեն, զորօրինակ ի հօրէ, յամուսնոյ, յորդւոյ, ի բարեկամէ իսկականէ եւ յայլոց:

ՍԿԶԲՆԱՆԱՂ, յատկապէս կոչի նախանուագումն այն հանդարտիկ եւ համաձայնեցութիւն աղեաց ժնարին եւ այլոց գործեաց երաժշտական, զոր նախ ժան զերգելն սովոր են երգիչն եւ ժնարահարք փորձառոցել: Լատ. Վուկո՛ւտիում:

ՎԱՂԱՐԿՈՒԹԻՒՆ, երկարեցումն եւ տարածումն ժամանակի, ի ներկայէն առ յայլս ամակնակս: Լատ. Միլա՛ցիօ:

ՎԱՐԿ, -ի. եւ ՎԱՐԿԵԱՆ, -ենոյ. Է՛ մասնիկն այն, զոր թէպէտ եւ փոքրիկ իմն է, սակայն դրեցեալ ի քար կշռոյն, շարժէ զնա եւ ստորահակէ, ուստի ումանք կէտ անուանեն վասն փոքրութեան: Լատ. Խօմէ՛նքում:

ՎԵՀԱԼՈՒՍՏԻ, -եր. յոյժ պայծառափայլ, լուսաւորագունեղ, վճտագոյն: Փոխարերութեամբ առնանի վասն ազնուագունեղի, հոչակաւորի եւ համբաւածաւալի: Լատ. Խլուսթրի՛սիմու:

ՏԵՍԱՓՈԽ. Կոչին գանազանութիւնք փոփախմանց ընտեսարանում, մինչ իրակին ի դերասանից պողունուագք կամ ժաղենուագք: Լատ. Աչե՛նայ:

ՏԽՈՐԺԵՄ. ոչ ախորժեմ:

ՏՐԱՄԱԶՈՅ, անզոյգ, հակազոյգ, անհանգէտ, այսինքն՝ ընդդեմ գուգութեան եւ հաւասարութեան:

ՏՐԱՄԱՊԱՀՈՎ, անզուրկ ի կասկածանաց եւ յերկիւդէ, ո՛չ անբոյք:

ՏՐԱՄԱՃԱՐԵՄ. որոնեմ յամնենց կողմանց, յուզեմ հոգունակարար եւ հետազոտութեամբ վիճարանեմ: Լատ. Միսգուի՛րօ:

ՏՐԱՄԱՏԵՍԵՄ. յայտնապէս եւ իսկապէս նամաշեմ, արտադատեմ, գանազանեմ, դնեմ զտարբերութիւն ենթադատութեամբ եւ բաժանեմ յիրերաց զշարն եւ զբարին եւ զայլս: Լատ. Միսչէ՛նօ:

ՓԱՂԱՐԿՈՒԹԻՒՆ. ենթադատումն ծածկագունի եւ անգիտացելոյ ուրուք իրի, զոր մտածեմք յարաբերութեամբ նշանաց իմիք եւ

պատճառաց եւ կարծեմք այսպէս կամ այնպէս գոլ: Լատ. Քօ-
նիեքքո՛ւու:

ՓՈԽԱՐԾՈՒԹԻՒՆ. արտադրումն գործոյն իւրոյ, զոր ունի ի բնու-
թենէ եւ կամ մինչ հարկի յայլմէ առ ի առնել զնոյն:

ՓՈՔԻՆ. մակրայ բացասական, ո՛չ, մի՛:

ՔԱՂԱՔԱՐԾՈՒԹԻՒՆ. քաղաքավարութիւն իմն, որ ի խօսս եւ ի
կատակս խառնէ զիամեստութիւն եւ զիեշտացութիւն հանոյա-
կան եւ գուարճացուցիչ: Լատ. Էութուաֆէ՛լիա:

ՔԱՂԵՆՈՒԱԳ. տեսակ իմն վարժելոյ զտադս բանաստեղծականս,
նորում բագաւորաց եւ իշխանաց եւ կամ այնց, որք ի յարքու-
նիս ելամտեն, բշուառութիւնք եւ տառապանք արտացուցա-
նին: Լատ. Բռանի՛տիա:

**Ոչ ընդարձակ այս հրապարակման մէջ, փորձեցինք ցոյց
տալ մի կողմից՝ Ժէ. դարի լատինաբան հայերի բառարանա-
ստեղծ գործունէութիւնից մի դրուագ, միւս կողմից՝ հայերէնա-
գիտութեան մէջ ոչ լիակատար մեկնաբանութեան աժանացած
բառարանագրական մի յուշարձանի՝ Վարդան Յունանեանի «Բա-
ռարան գրքիս»ի յատկանիշները: Կարծում ենք, որ այն իր ուրոյն
տեղը պէտք է գրաւի լատինաբան հայերէնի ուսումնասիրու-
թեան ծիրի մէջ:**

**Իր բառարանը Վ. Յունանեանն աւարտում է հետեւեալ
վերջաբանով՝ «Յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն՝
նմա փառք յախտեանս. ամէն», որով եւ մենք աւարտում ենք
ներկայ հրապարակումը:**

Summary**A 17TH CENTURY MONUMENT OF LATIN-ARMENIAN LEXICOGRAPHY****NORAYR POGHOSYAN**

In the Middle Ages a number of Armenian dictionaries were written, most of which are known to modern science. However, there are also dictionaries which are not so famous; they were published, for instance, in the 17th century Armenian books. Among these dictionaries, we should mention the one written by Vardan Yownanean and published in 1674. Vardan Yownanean translated Johannes Bona's religious work from Latin into Armenian and attached a dictionary consisting of 50 pages at the end of the translation. The author wanted to make Latin words as well as some Armenian words created by him understandable, in order to make his translation more easily readable. Younanian explained the meaning of many words in his dictionary by using words of popular speech as well as dialectical words; he created many new terms and explained them. For instance, he created the Armenian equivalents for such Latin words as *Promptus*, *Histro*, *Larva*, *Discriptio*. Not all the words created by the author were later used but they have great importance for the study of the Armenian language's history.

The given article presents the peculiarities of the dictionary, the complete list of the newly-formed words.